

ԵՐԱԶ ՈՒԽՏԱՒՈՐԻ ՈՒՐՈՒՔ ԱՌ ՇԻՐՄԻ

ԹԱԼԻԱԴԵԱՆԻ



Որպէս յայտ է բանասիրացն ազգիս, բարեյիշատակ հայր և հիմնադիրն Հայ Հրապարակագրութեան ծնաւ և սնաւ անդ ի Շիրազ Պարսից՝ ուր երբեմն ծնեալ, սնեալ և թաղեալ իսկ էին իրանի անլուզական քերթողը Սադի և Հաֆէջ՝ ուր զարմանալի իմն զուգարկութեամբ հանգեաւ և անմահ քերթողն ազգիս Մեսրոպը թաղիարդեան, ուստի կարէ գերահռչակ Աթենքն Պարսիկ գրականութեան որ «Դառ-Օլ-էլ» կոչի մինչև ցայսօր, յաւելուլ ի շարս պարծանաց իւրոց և զայս, թէ տուեալ է սազնջական Հայ ազգին զհայր Հայ Լրագրութեան և ընկալեալ ընդ հիւրասէր, դու սաս, Բանաստեղծաբարջ հոգով իւրով զոսկերս հօրն Հայ Վիպասա-նութեան, զի թաղիարդեան էր որ եղ զհիմն ազգային վիպասանութեան յամին 1847 իւրով «Վէյ պարսնկան» երկասիրու-թեամբ՝ բազմօր յառջը բան զԱրժեանիս «Վէրք Հայաստանի»:

Արդ յամին 1888, յամսեանն Նոյեմբերին, ի գալ իմում ի Նոր-Պուլյայէ աստ ի կալկաթա, յորժամ ժամանեցայ անդ ի Շիրազ՝ զնացի անմիջապէս յուխտ ի գերեզմանատունն Հայոց՝ որ առ ստորոտով «Բարաբօզ» լերին՝ որ է երկրորդ «Օշական» վասն իմ, զի անդ ննջէ զնինջն յաւիտեանից անմահ և անզուգական քերթողն թաղիարդեան, որ ի հովատուն լերանց Արայեան բռնցաւ հողմովք բռնութեան՝ պանդխտել ի Հինդ հրայրեաց, ուր փայլեցաւ որպէս նոր ոմն Մեսրոպը ծաւալող Հայ ոսկեղինիկ դպրութեան ի Հնդկահայս՝ իւրով «Սորթ Սանդոխտ» երկեսե դպրոցաւ, «Ազգասէր» լրագրաւ և ազգի ազգի երկասիրութեամբք ի դասական լեզու ազգիս, և յետոյ ի դառնալ իւրում յաշխարհ

հայրենեաց իւրոց անդ ի Պարսիցն Շիրազ՝ աւանդեաց զհողի իւր չնաշխարհիկ յամին 1858, ի հասակի 55 ամաց:

Յետ ինկօք անուշիւք պաշտելոյ զշիրում անմահ քերթողին և համբուրեալ զայն ջերմեռանդութեամբ հողոյս և նովին հայցմամբ, որպէս երբեմն ինքն թաղիարդեան առ շիրմի սրբոյն Մեսրոպայ որ անդ յՕշական, ելի ի լեառն «Բարաբօզ» որ համարի գոլ Պարսիցն Պառնասոս, զի անդ ի հնուսն ասեն՝ թէ ստացեալ իցեն ներչնչունն ի Պարսից Մուզայից տիեզերահռչակ քերթողը Սադի և Հաֆէջ, որք զանուն իրանի պանծալի կացուցին ի գիրս և յերգս: Անդ ի «Բարաբօզ» ճգնեցաւ երբեմն և համազգին մեր Տէր Յարութիւն Շամառն Շիրազեցին զամս եօթն՝ նախ բան զգնալն ի Մաղղաս Հնդկաց յամին 1784՝ ուր և յետ տասնեակ ամաց՝ այն է յամին 1794՝ եղ զհիմն Հայ Լրագրութեան: Յետ բազում դժուարութեանց և աշխատանաց իսկ հասի շնչասպառ ի տեղին՝ ուր կիսամերկ հողաթաթաւ և ժանտաղէմ «Դարվիշք» Պարսից զճգնաւորի վարէին զկեանս, երկայն հերք, պատառոտուն զգետուր և յաւէս հիւծեալ մարմնովք, և մեռեալք աշխարհի և աշխարհ մեռեալ վասն նոցա միանգամայն:

Տեսանէին աստ և անդ վիճափոր և բնական այրք և անձաւք՝ ուր բնակէին «Դարվիշք», այլ ի տափարակի անդ ուր հաւաքեալ էին ոմանք ի նոցունց՝ տեսի զի մին խարոյկ ջնուցեալ և ի վերայ եռոտանուց «հարիսա» եփէր, միւսն կարկատէր զպատառոտուն բուրձս իւր, մին ափիոն ծիւէր և երազէր զղրախտն Մօհամաւադի, այլ ոմն ի ձայն բարձր կրկնէր հատուածս ինչ ի Ղօրանէն, իսկ երիտասարդ

ոմն վտիտ մարմնով և զուարթ դիմօր եր-
զէր ի ձայն ներդաշնակ զայն երգ Հա-
ֆէզայ՝ յորում ճերթողն հայրենասէր ասէ
նէ մի դէհանդ մաղա էջաջու՞թ բէ սէյու օ սափար
նէսէմէ սէբա օ զօրգալթէ մօսալլաթա,
որ Թարգմանի այսպէս.

Ոչ տան ինձ բոյլ յողերորոքիսն (այսինքն
գնալ յայլ երկիրս) առատօտեան զեփիտք և
վարդանցք Մօսալլայի»:

Եւ դեռ բանը ի բերան էին երգողին
զտենչանացն Հաֆէզայ՝ և ահա՛ տղայա-
կան յատուկ իմն պարծենդութեամբ, դու
իմա պարծենկոտութեամբ, սկսայ և ես
ըստ «Քէյթ բազի» սովորութեան Պարսիկ
ուսանողաց երգել և զայն երկտող ճեր-
թողին, յորում Հաֆէզ ասէ թէ

Ի սէբա Գառ բօզգարի բառ սահէլի ռուգ է Արաս,
Ի ուսէ զէն բառ խաբէ ան վազիօ մէջքին քօննափաս.

որ Թարգմանի այսպէս. «Յապնցանի քո,
զեփիտք առատեան, առ զեռեղբր երասի
գետոյն՝ տուր անդ համբոյր ընդ հող ձորոյն
և ադա գշունչ մ'ախոտս»: Այլ սակայն,
աւա՛ղ, վրիպանացս մարդկային ակըն-
կալութեան, զի այն ինչ յուսայի հանել և
այնու ամբողջ գմիսս ժանտարնոյթ զարվի-
շացն՝ սքանչացող հանդիսանոյթ Հաֆէ-
զայ՝ և ահա ժանտաղէմ ձերունին այն
որ ի ձայն ուժգին զօրան կրկնէր՝ եկն
եկաց առաջի իմ և եհարց ցիս զայրաց-
մամբ և յոտորտանօք. իսկ թէ զինչ խըն-
դրէի ես անդ և զիմրդ յանդգնեալ էի
անկրօն և անմարտ Հայ պատանիս ոտ
կոխել ի սրբավայր իբրեանց յայն մա-
նաւանդ յաւուր Ուրբաթու, որ էր օր ա-
ղօթից և մաղթանաց առ «Ալլահն» հա-
ւատացելոց: Տեսեալ թէ տղայական ան-
խոհեմութեամբ իմով զնացեալ մտեալ էի
կամովին յորչա մարդկերպ առիւծուց,
պատանի զիւրավառ որբան որ էի, տա-
կաւին չկորուսի զնեակայութիւն մտաց
իմոց, ուստի քաղցրութեամբ ասացի ցմռ-
լեռանդն այն աղօթիկեր՝ թէ մի՛ զայրանար
աղաչեմ յիմ վերայ ձերունիդ բարեմիտ,
զի չեմ եկեալ ես աստ խանգարել զա-
ղօթս ձեր և կամ վանդորրութիւն մտաց
յաշխարհէ հոռացեալ միանձանցդ, այլ

միայն տեսանել զայրն այն՝ յորում հա-
մազգին իմ Տէր Յարութիւն Շմաւուն Շի-
րագեցին հզեցեալ զամս եօթն՝ հարիւր
ամօր յառաջ՝ և աստ ի միջի «Ղալանդա-
բան դարվիշացդ» ուսաւ կատարելագոյն
զգիր և զղղորթիւն անզուգական ֆըր-
դօսույ, նէղամուլ, Սաղուլ և Հաֆէզայ:

Ընդ լուր անուան Տէր Յարութիւնի
Շմաւունեան՝ երիտասարդն այն համակրելի
որ զՀաֆէզայն երգէր զերգս՝ ել և եկաց
առաջի իմ և յոժ գաղաբարութեամբ
ողջունեալ զիս ասաց, թէ՛ գիտե՛ս Հայ
պատանի թէ ունիմք մեր մինչև ցայսօր
ի մենաստանի մերում աստ ի «բարաբօհ»
զձեռագիր աշխատութիւնս «Քէշիշ Առու-
թունի» (Տէր Յարութիւնի) ի լեզու
Պարսից, զեղեցիկ «Նասրայի» զըջու-
թեամբ ի վերայ ֆրիստոնէական կրօնի
և դաւանութեան, որպէս և ի վերայ ու-
նայնութեան մարդկային կենաց՝ յորում
խօսի յատկապէս զկենաց իւրոց յոժ և
կարի դառնացեալ սրտիւ, զի ասէ թէ՛ ի
միջոցի եօթն աւուրց կորոյս զերկու բիբս
աչացն, այսինքն զերկոսին որդիսն, ուստի
յանչնարին դառնութենէ սրտին խոյս ետ
ի Շիրազայ և եկն ընակել յայսմիկ ճրգ-
նարանի, հեռի ի մարդկանէ, հեռի ի հրա-
պուրանաց և ի զրգանաց հեշտալուր կե-
նաց, զի ո՛չ ապաքէն վաղանցուկ երազ
իմն է այս կենանք մարդոյ:

Խնդրեցի բազում թախանձանօք տեսա-
նել զձեռագրիւն զայնուսիկ, այլ սակայն
ասաց դարվիշն համակրելի, թէ զսանին
այնոքիկ ընդ ինամատարութեամբ դար-
վիշի ուրուք որ չէր անդ յայնժամ, այլ
զնացեալ ի քաղաք անդր՝ հաւաքել զուրուս
բարեպաշտից և այնու զնել զօրապահիկ
իւրեանց յաւէտ սակաւագոյտ վասն միոյ
եօթնեկի:

Առաջնորդութեամբ բարեմիտ դարվիշիս
զնացի և տեսի զճգնարանն Շմաւունեանն
Տէր Յարութիւնի, և տեսեալ թէ՛ այլ ևս
ժամ էր աղօթից և ճաշու դարվիշացն,
ուստի ողջունելով զնոսա յարգանօք «Խօ-
դա հաֆէզ» (== Աստուած պահնայսմ) ասե-
լով՝ ի՞նչա ի բարձրաբերձ լեռնէն և հասի

դարձեալ ի գերեզմանատունն Հայոց Շիրազայ, որ առ ստորոտով «բարաբո՛հ» լերին. և անդ ընդ հովանեաւ տիրազին նստույ որ առ շիրմի թաղիաղեանի՝ նստայ տալ հանգիստ իմոց խնջեալ անդամոց, զի վերելք «բարաբո՛հ» է և դարձ անտի պատեալ էին զշուշ էմ միանգամայն:

Նստեալ առ շիրմի բերթողին, ի խորս խորհրդոց սուգան իմ միտք և սկսայ խորհիլ և խոկալ զբերմանց աշխարհի և ըզպատրանաց բազդի որոց ի ձեռին խաղալիկ դառնայ մարդ զամենայն աւուրս կենացն՝ թագուն իմն խորհրդով թերևս:

Անդ ի «բարաբո՛հ» բաղդ եղև ինձ տեսանել ասեմ զճգնարանն Հօրն Հայ Հրապարակագրութեան, որ զամենայն աւուրս կենացն թէ աստ ի Շիրազ և թէ անդ ի Մադրաս Հնդկաց տանջեցաւ ի կոյր բաղդէ՛ այլ թէ վասն որոց յանցանաց արդեօք այն. զի էր այր լուսամիտ զբասէր և ազգասէր: Աստ, ասեմ, հանգչի ընդ օտար աստեղօք հայրենասէր բերթողն թաղիաղեան որ զամենայն աւուրս յաւէտ արկածալից կենացն հալածեցաւ ի կոյր բաղդէ և յանողոք ճակատագրէ իսկ, և եղև թափառական ի բովանդակ կեանս իւր, զորով մերթ սարկաւազ յէջմիտածին, մերթ ուսանող ի կալկաթա Հնդկաց, մերթ վարժապետ ի Նոր-Չուղա, մերթ զբազմաճոռ ի մեծն Պօլիս և հուսկ ուրեմն դասասաց, մատենագիր, բերթող, վիպասան և հրապարակագիր ի կալկաթա Հայաշատ ուստանին Հնդկաստանի: Կարեան թէ Հայ զբազիտաց ճակատագիր է տանջիլ ի բովանդակ կեանս իւրեանց, որով իրականանան բանք բերթողիս այսորիկ որոյ և ինկելի շիրմ ահա՛ առաջի իմ կայ թէ՛

Գիտունք, յինէն ուսարուք,
Մի յոյժ մոռաց ապաստան՝

Կեանս վարել մեծաւորք,
Յաշխարհի սատ փորձութեան:
Ձի սպառազն ծնա ձեր,
Պաշտպանուհին Աթենաս,
Կեանք զգիտնոց ցուցանել
Թշուառութեամբք ոլորած:

Յետ այսօրինակ խոկմանց ներհեցայ և անկայ ի ճուն անուշակ՝ անդ առ շիրմի բերթողին, այլ բարէ տեսչեանն որ երևեցաւ առաջի և շաջ իմոց, զի տեսի թէ բացաւ յանկարծ գերեզման թաղիաղեանի և կափարիչն անկաւ ի մի կողմն, որպէս թէ ի զսպանակէ իմերէ մղեալ և երեսնամեայ ննջեցեալն համարածեալ անտի եկաց առաջի իմ որպէս կենդանի ոք և ըստ ամենայնի կատարեալ: Չահի հարայ ընդ տեսիլն այն զարհուրելի, դող անկաւ յանձն իմ համայն և սարսուռ մահահրաւէր գնաց յերակս իմ ողջոյն:

«Ո՛վ իցեց դու», եհարցնաւ քաղցրութեամբ, և ընդէ՛ր յայսամիկ ժամու տուրջեան ի ճուն մտեալ եւ աստէ՛ն ուր ո՛չ մարդ կայ և ոչ հոտ և հետք մարդոյ. և զի՛նչ է այս զոր տեսանեմ շուրջ գինև, խունկ և մոմ, ծաղիկ և դափնի, զի ահա՛ երեսուն ամք են՝ յորմէ հետէ եկի ննջել աստ այլ ցարդ ոչ ոք եկն տեսանել թէ կայ արդեօք հոգակոյտ իմ այս թէ անհետացեալ է մինչ ի սպառս Գիտասջիր ազնիւ անձնօթ թէ յետ մահու իմոյ ոչ ոք ի միջի բազմաթիւ կարծեցեալ բարեկամաց իմոց և յաշակերտաց իսկ որբաց զիս բաց ի կալկաթաքանակ թաղէնուէ խաչիկ Ավետուս մեանց որ բանիւ և գործով եցոյց աշխարհի թէ էր արդարև ճշմարիտ և հոգեկից բարեկամ իմ սիրելի, զի ոչ միայն հրապարակաւ յայտնեաց զվիշտ իւր և զցաւ ընդ կորուստ իմ անդարձ հրատարակելով Ո՛ր(1) մի ի վերայ մահուան իմոյ

(1). Ողբերգ թաղէնի Խ. Ավետուսեանց՝ էր օրինակ ցայս.

1. Եւ դու Մեսրոպք, անգին Մեսրոպք,
Եւ դու այսպէս վաղ հանգեար,
Ի վշտալից աշխարհէս մեր,
Յերանաւէտն ենպեցար:

2. Վաստակեցաւ այս մարմինն՝
Այլ ոչ հոգիդ, ես գիտեմ.
Անմահ հոգիդ միշտ աննկուն,
Միշտ վառվռուն, միշտ վսեմ:
3. Ափսոս Մեսրոպք. — Իմ պէս բազուկք
Ափսոսացին այտուհետ,

յ « Արշարայս Արարատեան » լրագրին Չմիւռնիոյ, այլ և պատրաստեալ մարմարիտեանայ Արձան Յիշատակի յանուն իմ առաքեաց զայն աստ ի կալկաթա ճաղաքէ Հնդկաց, որ և զետեղեալ գտանի յորմն եկեղեցւոյն քաղաքիդ մինչև ցայսօր (1) :

Պատասխանի Հարցմանց յարուցեցւոյն ի մեռելոց արարի այսպէս . Մետրովր է անուն իմ և յերկիկ եկեալ աստ ի Նոր-Ջուղայէ՝ գնամ ի վազուի ի կալկաթա Հնդկաց վասն կրթութեան հայ և անզրիացի լիզուաց :

Մղեալ է հետաքրքրութենէ ելի այսօր ի լեան « Բարբառօն »՝ որ ի վեր անդր տեսանել զայրն այն, յորում երբեմն ճգնեալ էր Տէր Յարութիւն Շմառն Շիրազեցին՝ որ յետոյ եղև Հայր Հայ լրագրութեան ի Մարաս, և իջեալ ի լեռնէ անտի նրստայ աստ ընդ հովանեաւ նոճուոյս՝ տալ

հանգիստ յաւէտ իռնջեալ անդամոց իմոց, և անկախ իմոց անտի կամաց անկայ ի քուն անուշակ : — Այլ ուստի՞ քեզ անուռդ այդ, եհարց նա յոյժ զարմացմամբ, զի յորժամ ես անդ ի Ջուղա գտանէի, ասաց, 55 ամօք յառաջ որպէս Ռուսցիչ « Ալմ-Նափրկչեան Ճեմարանի » ի միջի բազմաթիւ աշակերտացն իմոց չտեսի զոր որ ունէր անուն Հայկական, զի սովորական անուանք նոցա էին կարապետ, Յովհաննէս, Մկրտիչ, Արբահամ, Յակովբ, Յովսէփ և որք ի կարգին առեալք ի հին և ի նոր կտակարանաց, Ասացի թէ տակաւին շարունակի այդ ձև անուանակոչութեանց ի Նոր-Ջուղա, այլ սակայն յարգելի հայր իմ կոչեալ էր զիս յանուն և յիշատակաւ սիրեցեալ վարժապետին իւրոյ և քեռտուն իսկ, որ լեալ էր ասէր « զբսեցի » և ոչ Ջուղայեցի : Ընդ լուր « զրսեցի »

Որոց հոգի Ազգին փառաց
Նախանձաւոր իցէ եթ :

4. « Մենիր յետոյ սիրեմ գրեզ »
Այթ ասացեն, բայց ոչ ես.
Ես սիրեցի գրեզ կանխաւ՝
« Ազգասիրաւ » վկայես :
5. Ոչ ափսոսամ վասն քո ինչ,
Զի դու գերծար ի ցաւոց,
Զարդինաշատ ատուք քո
Ազգին ի սպաս զոհելով :
6. Որքան կացցէ լեռն Հայոց՝
Որքան կացցէ և մեր գիր՝
Պայծառ անուն իմ Մետրովբիդ
Ամմասոցի անխորի :
7. Այլ ափսոսամ վասն Ազգիս՝
Որ քեզ պէս մարդ արդ կորոյս,
Որոյ նման հազուագիւտ է՝
Հայիմ յոր կողմ և ի կոյս :
8. Զի բանաստեղծ ի բնութենէ
Կարէ միայն ծնանիլ,
Տաշեալ կոկեալն արհեստիւ
Ոչ կարէ յայն ժամանիլ :
9. Դու բանաստեղծ և ճարտասան
Միանգամայն յայտնեցար,
Թէ և անձուկ էր ասպարեզդ
Սակայն ոչինչ վերջացար :
10. Աշխարհանոզ « Սօս և Սօնդիպի »

Եւ « Ազգասէր » լրագիր,
Բաւական են ի հաստատել՝
Զոր ասացի լիալիր :

11. Ոչ է ինձ հարկ թուել զամէն
Զգործ մասանջրդ ճարտար,
Ժամանակաւ, զգին իմ,
Վկայեցէ և աշխարհ :
12. Բայց եկ Մետրովր, եկ ասա ինձ
Հի՞մ առ օտարս ետուր վազ,
Ո՞ր Հայաստան քո հայրենիք
Եւ ո՞ր Պարսիցն Շիրազ :
13. Յորթալ գրեզ լամ և գիւմ Ազգ՝
Վտարանդի ցանուցիր,
Ընդ ամենայն ուրրոտ երկրի
Փան գիտայէլ տարագիր :

(1). Իսկ ժահարման մարմարինեայ ունի Յիշատակարան հակիրճ օրհնակ զայն, շարադրեալ նոյնպէս ի թաղեոէ իւ. Ավետուճմանց :

Մետրովր Դաւիթ Թաղիպեան
Պերճ վարժապետ մեծ գիտնական
վասմ՝ քերթող մատենագիր
Հանդիստ առնու յայս թիւիս դամբանս
Զքեզ Հայոց Գիտնոց կաճառ
Պատուասիրէ միշտ սիրապառ
Եւ Նոր-Ջուղա և կալկաթա
Ոչ մոռացին զքեզ իսպառ :
Ի 28 Մայիսի, 1858 :

անուան փայլեցաւ երես նորա զերբնա-
կան իմն ոգևորութեամբ, ուստի հնարց
հետաքրքրութեամբ իսկ. Ո՛վ էք հայր քո
որ այդքան երախտագէտ զտաւ առ ու-
սուցիչ իւր « Դրսեցի » :

Պատասխանեցի թէ Յակովբ էր անուն
հոր իմոյ՝ շառախդ ի Սէթեանց հին
տուհէն :

Ապրիս որդեակ իմ, ասաց նա քաղցրու-
թեամբ և զուրգուրանօք, զի տեսնեմ թէ
դու որդի ես կրտսեր եղբօր վազամեոիկ
կենդ իմոյ չքնաղին թանգայ, որոյ ոսկե-
ղէն թեկ կենացն խզեցաւ անդ ի Դաւրէժ⁽¹⁾
յամին 1837 ի ծաղիկ հասակի 21 ամաց՝
որով և իսաւրեցաւ հորիզոն կենացս մինչ
իսպառ, զի

Անգին իմ կորուստ
Մեծ էր քան զապրուստ
կեանք առանց նորս
Իբ ինձ հազար մահ :

(1). Գերեզման վազամեոիկ Շորաքեռն իմոյ թանգայ
Թաղապետնց զառնի յիկեկեցաւ շայտ որ անդ ի Դաւ-
րէժ՝ ունեւի՞մ տաղանքաբ էր սեռա մարմարինեանայ :
Իսկ հակերճ այլ որտառուչ տաղանգիրն՝ շարա-
դրեալ յանմխիթօր ամուսնոյն՝ է օրինակ գայ :

Թանգ Մեարովբայ Թաղապետնց
Օտար յիւրոց Հայրենեաց
Ի ծնանել զմարդ յաշխարհ
Ինքն ծնաւ առ Աստուած :
1837 ամի. 18 Կոյեմբերի :

(2). Անձնճ քերթողն Թաղապետն Ի քնար հոգետուելդ
երբէ զբնազորութեանց երկանայրշատակ նախաժօրն
իմոյ Մկրտիչ Աղազար Աթեանց՝ յերում «Եղբերգու-
րեան յորեա թանգայ Թաղապետնց»՝ օրինակ գայ :

Իսկ զՄկրտչի վեհ Աղազարեանց
Թուել կարեմ ես գարեմնասնութեանց
Չնաշխարհիկ գործ, որով շահեցաւ
Հայր արժանապէս կոչիլ հայրենեաց,
Որ ի զբազմունս զիրաց աշխարհի
Յանձին ցուցանէր զգնաւորի
Չանհամեմատ վարս աստուածպաշտութեան
Եւ հետեղացն օրինակ բարի :
Ողորմած իշխան, երբեք չըլսի՝
Թէ տայր աղքատաց հանդերձ հնոսի,

Արդ որովհետև եղբորորդի ես դու չքնա-
ղին իմոյ թանգայ և զեղեցիկ իմն խոր-
հըրդեամբ ժառանգեալ իսկ ես զիմ անուն,
ուստի պարտ անձին համարիմ տալ քեզ
ընդ հայրական օրհնութեամբս և իւրատս
ինչ պիտանիցս զորս եթէ ընդունիցիս որ-
պէս ուղեցոյցս պազայ կենացդ՝ ոչ փո-
շիմանիցիս բնաւ զի

Ինձ այս կեանք դպրոց
Իսկ վարժապետ փորձ
Բուռն և բանացի
Դատեր շատ ուսոյց :

Տաց քեզ արդ տաան իւրատս ևեթ,
եթէ սակայն անսալ կամիցիս :

Առայժև Գնա դու զբարհեան զշաւիղ
հայրենասիրութեան բարեխիշատակ նախա-
հօր քոյ Մկրտչի⁽²⁾ Աղազար Աթեանց՝
Հօր ասեմ Հայրենեաց իւրոց, սիրեալ զազգ
քո և զհայրենիս և ըստ օրինակի նախա-
հօր քոյ վասն հայրենեաց վաստակեալ :

Նորովք զնտա պնէր զարգարուն
Շատ եղեալ ինքեան զիւր պատառատուն :
Բայց զինչ այտօրիկ Հայրենասիրին
Որ զինք գանձն միշտ վերոյ ազգին,
Ներեալ, ընթերցող, զմին հազարաց
Բերել զօրինակ սորին ճգնութեանց :
Այն ինչ բարբարոս բռնաւոր Պարսիկ
Բեռնէր Զուղայոյ զիւր կապալ սաստիկ,
Թագոյց սա զազգ իւր, լ'ինքն քաշապէս
Անըմբեր վշտաց հմուտ ի հանդէս :
Յետ սպառնալեաց բանտից շղթայից
Դառն հարուածոց դառնազոյն զանից
Երբ զականանին գամբք երկազմեօք
Ի սիւն սեւեռեալ տոզորէր ցաւօք, .
Ատ սիրելին Ազգ առաքէ լրտես
Չառաքիներ հօր լրտեսել հանդէս,
Յայնմ վիճակի ցեկն պատգամէր՝
« Գնա որդեակ իմ, մի՛ աստ երևիք՝
« Գուցէ տանջանաց հանդիպեալ մասին
« Չկարողացիս տակալ աղտիս,
« Յայնժամ փոխանակ բարևոյ՝ չարաշար
« Մատնութեան Ազգիս լինիցիս պատճառ » :
Այսպէս անվեհեր էր նորա հոգին
Այսպէս համբերող լինէր ծերունին,
Մինչ զիրաւունս իւր ի յաղթութիւն հան,
Լուաց զարտատուն վտակաւ արեան :

Ջրոյ բնդ անզլիականին, ուսանիչիւր լաւապէս և զգրական լեզու ազգիս անդրանկան, և ջանա միշտ վառ և անշէջ պահել զհրազն Մեարոյրեան դպրութեան ի Հընդիկա՝ անդ ուր զարուն կենացս փոխեցաւ յաշուն տերեւթափ, անդ ուր զամս բազումս տքնեցայ ես սոսկ ազգին յօգուտ, թէ՛ որպէս ուսանող և թէ՛ որպէս ուսուցիչ, թէ՛ որպէս հրապարակագիր և թէ՛ որպէս մատենագիր, զի էի ես անդ մերթ պատմաբան Հնդկաստանի, մերթ փերեզակ յերկրամիջի, մերթ զբաշար տպարանի, մերթ հիւանդ գետնախշտի:

Երկրորդ: Մի բանար անդ դպրոց՝ որպէս արարի ես, զի յայնժամ խաւարամիտք և խոռվարարք ասիցեն թէ՛ «զՄարդաբանական ճեմարան»՝ քանզի ջանաս, զի թէպէտև «Սորոք Ստեղծիտ» երկսեռ դպրոց իմ էր յաւէտ վասն կրթութեան զողորական սեփին՝ որք չկարէին մտանել ի «Մարդաբանական» վասն յայտնի պատճառաց՝ այլ սակայն և զերծ և ազատ ջննացք բնաւ ի բնարանաց, ի զրպարստութեանց և ի հալածանաց շարամիտ ազգայնոց ժամանակին: Ամաչեսցեն որք ի նանիր հարածեցին զանձն իմ և այնու զրկեցին զապագայ մարան Հայ հասարակութեան ի կրթութեան մայրենի լեզուին: Արին նոցա ի գլուխ իւրեանց:

Երրորդ: Մի հրատարակեր բնաւ լրագիր ի Հայ լեզու անդ ի Հնդիկա, զի փորձն անվրէպ ուսոյց ինձ թէ՛ այդպիսի իմն ձեռնարկ է զուր ջան և անօգուտ վաստակ, որովհետև մեծափարժամ Հնդկահայք առատօրէն և անխնայ վաստեն և յայլին զըրանն իւրեանց յայս կոյս և յայս կոյս ի գրօսանս, ի խնեշանս, ի թղթախաղս, ի ձիարշան և ի նմանօրինակ շուայտութիւնն, այլ անմիջապէս թառամի և քացախի յաւէտ զուարթ երես նոցա՝ յորժամ յանզգիցի որ ինդրել ի նոցանէ տալ զէթ «ռուփի» մի առ ամբն վասն ազգային լրագրաց: Ափսոս աշխատանացս:

Չորրորդ: Մի վճատիւր դու սակայն ի վաստակն քո, զի որպէս յիմում ժամա-

նակի, նոյնպէս և յաւուրս զործունէութեան քում զտանիցին վատասիրտ և անբարեմիտ իմաստակը և ոտորք իսկ, որք ջանայցեն վատեցուցանել և վշտացուցանել զքեզ յամինայնի, այլ սակայն դու յԱստուած և յՂլխատութիւն միայն յուսացեալ՝ զնա զարահեռն զշաւիղ ընդ որ ընթացայ ես զամս յուրմս սոսկ ազգին յօգուտ, ի հեծուկս բազմակողմանի խոչընդոտից և յուսախարութեանց յամէն ուստեք կուսէ: Արդ ասացից թէ՛ զինչ պարտ և արժան իցէ քեզ առնել՝ յորժամ յարբունս հասանիցես դու:

Հինգերորդ: Որպէս տեսանեմ հնասէր որք ես դու, եթէ ոչ զայդքան տարժանելի աշխատութիւն յանձն չառնուիր բնաւ զնալ տեսանել անդ ի «բարաբոց» զճճաւրանն Հօր Հայ լրագրութեան, ուստի լուր և անսա բանից իմոց որք հային յօգուտ ազգիդ և ի փառս հայրենեաց: Վասն Հայ հնասիրիդ կայ ի Հնդկաստան ասպարէզ իմն ընդարձակ՝ որ ցարդ անձնակ մնացեալ է ուստի և իտպանացեալ, այլ սակայն տակալին հնար իցէ հանել անտի զնշարար ազգային հնութեանց և նորօք փնջել զզէպս և հիւսել զվէպս նախին Հայ գաղթականաց՝ որք զանուն Հայութեան պանծալի կացուցին յասպարիզին վաճառականութեան ի համօրէն Հնդկաստան: Մուտ դու յայն ասպարէզ փշալից և որպէս նոր ոմն Մարիրաս՝ Հան դու անտի զՊատմութիւն մեծագործ հայրենակցաց քոց Նոր — Ջուր զայեցոց, որք յերկց դարուց հետէ յոժ կարևոր դեր խաղացեալ են յաշխարհին յայնմիկ, թէ՛ որպէս մեծագործ վաճառականք, թէ՛ որպէս կարող և բանիւրան զիւրանագէտք և թէ՛ որպէս քաջ զօրապետք և սպարապետք, և ի լուր աշխարհի հոչակեա զքաջագործութիւնն նոցա, զի ճշմարիտ ազգասիրին է՝ օրինակաւ քաջի գործոց նախահարց՝ զօգիս որդոց զարթուցանել յազատութիւն հայրենեաց:

Վեցերորդ: Հաւաքան նոյնպէս յընթացս հնագիտական իտզարկութեանց քոց և զՀայ տապանագիրսն՝ որք ի սփիւռս Հընդկաց աշխարհին, որոնելով զայնս ի շէնս

և յանշէնս երկրին և ի լոյս ամ « զՄահարձանս Հնդկահայոց » ի Հայ և յԱնգլիացի լեզուն, զի խիթամ թէ եկեացէ ժամանակ՝ յորժամ ոչ ոք գտանիցի ի համօրէն Հնդկաստան որ կարիցէ ընթեռնուլ Հայ գիր, ուստի և երկլեզու Յիշատակարան քո այդ մնայցէ որպէս կոթող անհետացեալ Հայութեան ի Հնդկիս:

Երեկորդ: Հաւաքեա նովին նպատակաւ, և զՀայ տպագիրս Հնդկաստանի, զի ի 1773 ամէն սկսեալ ցամա 1873 տպագրեցան անդ ի Մարդաս և ի կալկաթա բազում մատենաք, տետրակք և լրագրքք իսկ ի գրական լեզու ազգին՝ զի ի միջի ազգիս ոչ ուրից գտան Հնդկահայոց նման սիրողք գրաբարտի՝ և այդ իսկ անհերքելի ապացոյց է ջերմ ազգասիրութեան նոցա, զորմէ սակայն չեն ինձ կամք ծանրանալ աստանոր: Գրեա նոյնպէս զպատմութիւն « Հայ Մամուլն ի Հնդկիս », զովութեամբ յիշատակելով ի նմին զկենաց և զգործոց այն ամենայն տպարանատեարք, խմբագրաց, հեղինակաց, թարգմանչաց և քերթողաց, որք զգար մի ամբողջ վառ և անշէջ պահեցին զատկայծակ ճրգոյ Հայ դպրութեան յայնմիկ անհուն օտարութեան:

Ռ: քերդ: Հսկեա միշտ ի վերայ մշակման մայրենի լեզուին եւ « Մարդասիրական ճեմարանք » որ ի կալկաթա, զի թէպէտ և նստեալ են յաթոռ Յարութիւնի Իսլուցեան և Յովհաննիսի Աղանուրեանց իմաստակը ոմանք ընդ ժամանակս ժամանակս, սակայն և այնպէս լեալ է ճեմարանն այն փարոս լուսաւորութեան Հնդկահայոց ի 1821 ամէն ի վեր՝ ի շնորհս անմահ երախտեաց Աստուածատրոյ Մուրադխանեան որ կտակեաց և Մնացականի վարդանեան որ հաստատեաց զայն ճեմարան: Վարեալ եմ և ես երբեմն զպաշտօն Հայ վարժապետի ի ճեմարանիդ, և ի միջի յառաջագէմ աշակերտացն իմոց էր ուսումնատենչ ջուզայեցի պատանին Մկրտիչ Էմին, որ յետոյ ոչ սակաւ փայլեցաւ ի Մոսկով՝ ի ճեմարանին հիմնելոյ ի վեհազեանայ տեսրց լազարեանց Նոր-ջուզայեցոց:

Եթէ գտանիցիս ի կալկաթա յամին 1921 յերկրորդում աւուր Ապրիլին, կարգա ճառ մի ի վերայ Հարիւրամեայ գոյութեան և զործունէութեան Մարդասիրական ճեմարանի, զի յայդմիկ աւուր իսկ տունեցի Հարիւրամեայ Յորեկեան միակ կրթական վառարանին ի համօրէն Հրեղկաստան:

Իննկորդ: Մնա դու միշտ բարեկամ Մխիթարեան Մխարանութեանց թէ՛ ի Վենետիկ և թէ ի Վիեննա, և մի լինիք դու նախապաշարեալ նման խաւարամիտ ազգայնոց որք խորշին ի նոցանէ՝ որպէս ի թունաւոր օժից և ի մահարբք բարբիք, ըստ որում գտանի տարբերութիւն կրօնական դաւանութեան ի միջի նոցա և ընդհանրութեան ազգին: Գիտասլիք՝ զի եթէ չէր լեալ յազգի մերում Մխիթար որ եղև երկրորդ գրաւորական լուսաւորիչ ազգին, մինչ ի սպառ կորեալ և անհետացեալ էր ցարդ զիր և դպրութիւն մեր անզուգական. զի ո՞րք էին արդեօք որք ետուն մեզ զՀայկազեան ճոխ բառարան, զեռահատոր Պատմութիւն Հայոց, զՀնասոսութիւն Հայաստան աշխարհի, որպէս և զգործն Յոյն և լատին քերթողաց, փլիւսոփայից, մատենագրաց և պատմօրանից ի Հայ լեզու..... Եւ եթէ չէր հալածեալ և զիս Պատրիարքն Կ. Պօլսոյ յամին 1839 վասն անհիմն կասկածանաց, մնայի և ես անդ ի Կ. Պօլիս և վասն հայրենաց վաստակէի, այլ սակայն յերեսաց անտեղի և անբրաւ հալածանաց Յակոբոս Պատրիարքին՝ յազատութիւն անձին խուսել պարտաւորեցայ և զեացի վերստին ի Հնդկիս, եթէ ոչ հզօր աջակցութեամբ զեպպանին Թուսաց՝ որ ի մայրաքաղաքի անդ՝ զիս ի Սիբիր արքունիք անշէջտ, և վասն ո՞ր յանցանաց իմոց արդեօք՝ զի յապրուստ անձին ուսուցանէի զՀայ լեզուն Ամերիկացի միսիոնարաց, որք նոր եկեալ էին յայն քաղաք: Ամաչեցեն որք ի նանիք հալածեցին թէ զՄխիթար և թէ զիս՝ զսարկաւազս սրբոյ Էջմիածնի երբեմն:

Տասնկորդ: Վերջին խրատ իմ առ քեզ

Թող լիցի այս, չզրադիւ ընրթողական գրութեամբք, զի դուր ընրթողաց և բա՛նաստեղծական զարութեանց այլևս անցեալ գնացեալ է և ի գործնական և ո՛չ ի գաղափարական դարու ապրիւ ըզգ վիճակեցի: Զհետ գնա միշտ լուրջ գիտութեանց, մանաւանդ հնագիտական խուճարութեան և պատմական ուսումնասիրութեանց, և թող այդ լիցի անփոփոխ ծրագիր բովանդակ կենացդ. և յորժամ առնիցես դու զայդ ամենայն շնորհօք բարեգութ երկնից՝ յայնժամ կարեմ գուշակել թէ ըստ օրինաց հոգեփոխութեան մաշկեակն եղիայիս եկեալ հանգիցէ յեղիսէդ, և որ ինձ թերի՝ քե առցէ լրումն ի կատարեալ գոնունակութիւն հօրդ ըստ

հոգւոյ և ի պարծանս ազնուական տոհմին Սէթեան:

Եւ այն ինչ յաւարտ բանիցն կամէի մատչիլ ի համբոյր աշոյ Մենտորին իմոյ վասն հայրական լուրջ և իմաստալից իրատօցն՝ և ահա՛ զարթեայ ի ջնոյ և տեսի թէ լոկ երազ իմն էր վաղանցուկ սակայն և այնպէս ի գունա անկեալ համարուեցի զցուրտ հող շիրմին, անդէն և անդ կալ և մնալ հաւատարիմ ընդարձակ ծրագրին՝ զոր եղեալ էր առաջի իմ անմահ՝ ընրթողն թաղիադեան՝ թէպէտե յերազի:

ի կալկաթա Հնգկաց
 յ 2 | 15 Մարտի. 1923

ՄԵՐՈՎՅ Յ. ԱԿՅԵԱՆԸ
 (Նոր - ձուլայեցի)

ԳԵՐՊ. ԻԳՆԱՏԻՈՍ ՄՍԼՈՅԵԱՆԻ ՄՐՏՆԻՆՈՒ ԱՐԲԵՊ. Ի

Հ Ր Ա Ժ Ե Շ Տ Ի Ճ Ա Ռ



Ս. Եփրեմի վանքի տանիքէն¹

Կեղեք վարկեան մը կարգերնուզ վրայ, ո՛վ քաջա-
 յաջթ ախժուծեց, վե՛հ գորականք, գիցազունք Տեսն
 Յիսուսի, ախշահանք հշմարիտ և անյողգողչ Հաւատոց,
 Յազնցնիւ կ'ուզեմ աչքերս ձեր քաղցր տեսութեանն,
 և ձեզ ուղղել երածնշտի խոջըս:

Ողջ՛յն քեզ, ո՛վ Հայրապետդ Եկեղեցւոյ, Իդնա-
 տինս, անունդ լուսատը, պատրիարք Անտիոքայ. քու
 քաջութեանդ հեռեկեայ ու քիչ տանե՛ն վկայութեամբ
 քեզ խոսակից պիտի լլայմ Անուպէս կ'երեկս աչքիս՝
 իբր թէ առնիդ եկող ժողովրդեան ըսէիք. « Թողուցիւն
 արարեց ինձ, երբարք, մի՛ խափանեց զիս ի կնոյ, կու-
 մեցարուք ընձ մեռանցն իմ... քոյլ տուց ինձ զտերթ
 լոյսն առնույ... Իշխան աշխարհիս այսորիկ յափտակիչ
 կամ գիւ... մի՛ ոք ի ձեզ օգնեսցէ նմա, այլ մամառանդ
 յիմ կողմն յերուց... Ես... յօմարտեմար մեռանիմ վասն
 Աստուծոյ », և կը ցանկամ որ ամենքեսս այլ մեանից
 ի սբ Անոր՝ « Որ վասն մեր մեռան՞ » խաչին վրայ
 ի քաջակերութիւն մեզ:

Ողջ՛յն ձեզ, զունդ մաքուր քանանայից և արգար
 զպիտեմբու: Ողջ՛յն ձեզ, ո՛վ ժողովրդեան ընտիր
 զպրօնեց, և կախիկ եկեղեցւոյ երեկնի քանակներու,
 սարկուսաց և նախապր պայրինքուն բախտակից եղաց:
 Ինչո՛ւ այդ վատերը ձեր ձեռքերն ու ուղեքը զերիկ

պէս կապած, և պարանոցները՝ շղթայից ծանրութեան
 ներքե են ընկած, անարզ ու գծած մարդկան բազմու-
 թիւն մը կը շրջապատէ զձեզ, կը տեսնե՛մ զձեզ շորս
 շորս, կնիզ կնիզ կապած, և հակաանկողնները կնիզ
 կնիզ և վեց վեց կարուած կ'իջեցնեն: Փիչ տանե՛ն ձեր
 նպատակին պիտի հասնիք, ձեր մաքուր իրզները պիտի
 կատարուն, և զԱստուած պիտի տեսնէք. երանի՛ ձեզ,
 բեր երանի՛. ահա թ՛շնամիներն այլ իրենց իբր կարուր
 նկատած գործը՝ քիչ տանե՛ն պիտի կատարեն, ձեր
 վրան իրենց բարկութիւնն ու սրամտութիւնն թափելով՝
 պիտի հասնին անուշ իրենց վրէժխղբական այնպեղակ
 նպատակին. այլ դուք՝ անունք ձեռքէն քաշած անիբա-
 ւութեանց վարժքը պիտի ընդունիք:

Երանի՛ ձեզ, ո՛վ Յիսուսի զանունովս, ո՛վ արփա-
 փայլ և շնորհազարգ սատուածային զաւակներ Հաւա-
 տոց, որդիք ընդհանրական Եկեղեցւոյ. նա պիտի շա-
 քի ձեզմով, պիտի հուշակէ ձեր անունները:

Կը տեսնե՛մ որ ձեր ըզուանքը կը զործածէք՝ շա-
 կերութեանն ու նեղութեան յարգը գրուստելով. ա.
 նունցմէ զղափքը բացատրութիւններ կը բղկնէ, մար-
 քարէական սաղմուտք նուիրուած են անուշ, տեսնալով
 յափտեական երկանութեան յաղթանակին:

Կը կարգամ ձեր զե՛նքերուն վրայ անպառ երջան: